ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 մայիսի 2025 թ. N 117-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ԿԻՑ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 3-Ի N 54-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Ընտանեկան օրենսգրքի 109-րդ հոդվածի 2-րդ մասով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածով՝ ***որոշում եմ***՝

1. Հաստատել Ջերմուկ համայնքի ղեկավարին կից Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի կազմը՝

հանձնաժողովի նախագահ՝ Թադևոսյան Գոհար - համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար

հանձնաժողովի քարտուղար՝ Կարապետյան Սաթենիկ – համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ

հանձնաժողովի անդամներ՝ Մարգարյան Մոմիկ– համայնքապետարանի աշխատակազմի սոցիալական աջակցության, առողջապահության, կրթության, մշակույթի, սպորտի և երիտասարդության հարցերի բաժնի պետ

Առաքելյան Անուշ– համայնքապետարանի աշխատակազմի սոցիալական աջակցության, առողջապահության, մշակույթի, սպորտի և երիտասարդության հարցերի բաժնի առաջատար մասնագետ

Գևորգյան Մանան– Ջերմուկ համայնքի ավագանու անդամ, Ջերմուկի թիվ 1 հիմնական դպրոցի ուսուցչուհի, Մանկական Զարգացման Հիմնադրամի Ջերմուկի կենտրոնի մասնագետ

Մարգարյան Մարո–Ջերմուկի կրթահամալիրի ուսուցչուհի

Քոլայան Արևհատ- Ջերմուկիթիվ 1 հիմնական դպրոցի ուսուցչուհ

Մկրտչյան Մարիաննա- Մանկական Զարգացման Հիմնադրամի Ջերմուկի կենտրոնի սոցիալական աշխատող, Ջերմուկի թիվ 1 հիմնական դպրոցի ուսուցչի օգնական

2. Ուժը կորցրած ճանաչել Ջերմուկ համայնքի ղեկավարի 2022 թվականի մարտի 3-ի «Ջերմուկ համայնքի ղեկավարին կից խնամակալության և հոգաբարձության

հանձնաժողովի կազմը հաստատելու և Ջերմուկ համայնքի ղեկավարի 2018 թվականի մայիսի 21-ի N 82-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 54-Ա որոշումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ**

2025 թ. մայիսի 23
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 մայիսի 2025 թ. N 118-Ա

ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՍԱԹԵՆԻԿ ՍԱՐԳՍԻ ՍՏԵՓԱՆՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ՝ ԲՆԱԿԱՐԱՆԸ, ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգին համապատասխան՝ հաշվի առնելով Ջերմուկ համայնքի բնակիչ Սաթենիկ Սարգսի Ստեփանյանի դիմումը (մտից՝ N 790, 21.05.2025 թ.) ***որոշում եմ՝***

1. Ջերմուկ համայնքի Կեչուտ գյուղի Կ. Աղաբեկյան փողոցի 13-րդ շենքում գտնվող բնակարանը, նախկինում տրված հասցեն՝ ք. Ջերմուկ, գ. Կեչուտ, 6–րդ փողոց, 13-րդ շենք, N 2 բնակարան, վերահասցեավորել՝

Ջերմուկ համայնք, գ. Կեչուտ, Կ. Աղաբեկյան փողոց 13–րդ շենք N 2:

3. Սույն որոշումը ենթակա է գրացման ՀՀ Կադաստրի կոմիտեի կողմից:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ**

2025 թ. մայիսի 23
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 մայիսի 2025 թ. N 119-Ա

«ՌՈԲՆԱՆ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿՆՔՎԱԾ ՀԱՆՁՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 1-ին մասով, հաշվի առնելով «ՌՈԲՆԱՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրեն Մ. Վ. Այվազյանի դիմումը (մտից N 795, 22.05.2025 թ.) ***որոշում եմ՝***

1. Ջերմուկ համայնքի և «ՌՈԲՆԱՆ» ՍՊ ընկերության միջև 2024 թվականի հունիսի 7-ին կնքված՝ Ջերմուկ քաղաքի Շահումյան փողոցի N 26 հասցեում ավտոկայանատեղ կազմակերպելու վերաբերյալ հանձնարարության պայմանագրում կատարել հետևյալ փոփոխությունները՝ պայմանագրի

ա/ 2.3–րդ կետի «ա» ենթակետում «5 (հինգ)» թիվը և թվականը փոխարինել «3 (երեք)» թվով և թվականով

բ/ 3.1-ին կետում «07.06.2025 թ.» ամսաթիվը փոխարինել «07.06.2026 թ.» ամսաթվով՝ պայմանագրի ժամկետը երկարաձգելով մեկ տարով:

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետի «ա» ենթակետի գործողությունը տարածվում է 2025 թվականի հունիսի 1-ից հետո ծագող հարաբերությունների վրա:

3. «ՌՈԲՆԱՆ» ՍՊ ընկերության տնօրեն Մխիթար Վոլոդյայի Այվազյանի հետ օրենքով սահմանված կարգով կնքել սույն որոշման առաջին կետում նշված հանձնարարության պայմանագրում փոփոխություն կատարելու մասին համաձայնագիր:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «ՌՈԲՆԱՆ» ՍՊ ընկերության տնօրեն Մխիթար Վոլոդյայի Այվազյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ**

2025 թ. մայիսի 23
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 մայիսի 2025 թ. N 120-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 31-Ի N 69-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետին, ինչպես նաև 34-րդ հոդվածին համապատասխան, հաշվի առնելով ՀՀ Կադաստրի կոմիտեի Գույքի նկատմամբ իրավունքի (սահմանափակման) պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին 2025 թվականի մայիսի 13-ի N Կ-13052025-10-0220 որոշումը՝ ***որոշում եմ***՝

1. Ջերմուկ համայնքի ղեկավարի 2025 թվականի մարտի 31-ի ««Նարեկ» բաց բաժնետիրական ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող անշարժ գույքերը միավորելու և հասցե տրամադրելու մասին» N 69-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝ որոշման 1-ին կետից հանել «ու «Արևիկ» սրճարանը» բառերը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ**

2025 թ. մայիսի 23
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 մայիսի 2025 թ. N 121-Ա

«ԼԻԴԻԱՆ ԱՐՄԵՆԻԱ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման, հիմք ընդունելով «Լիդիան Արմենիա» ՓԲ ընկերության՝ 2025 թվականի մայիսի 8-ի դիմում-հայտը՝ (մտից N 743, 15.05.2025 թ.)՝ ***որոշում եմ՝***

1. Ջերմուկ համայնքի Գնդեվազ գյուղում գտնվող 10-016-0227-0008 կադաստրային ծածկագրով հողամասի վրա ջրագիծ կառուցելու համար նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման նպատակով «Լիդիան Արմենիա» ՓԲ ընկերությանը տալ նախագծման թույլտվություն:

2. «Լիդիան Արմենիա» ՓԲ ընկերությունը պարտավոր է նախագծային փաստաթղթերը ներկայացնել համաձայնեցման և ստանալ շինարարության թույլտվություն:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «Լիդիան Արմենիա» ՓԲ ընկերությանը որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ**

2025 թ. մայիսի 30
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 մայիսի 2025 թ. N 122-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՆԴԵՎԱԶ ԳՅՈՒՂՈՒՄ ԳՏՆՎՈՂ 0,6041 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՐՊԵՍ ԱՌԱՆՁԻՆ ՄԻԱՎՈՐ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով՝ ***որոշում եմ՝***

1. Ջերմուկ համայնքի սեփականություն հանդիսացող Գնդեվազ գյուղում գտնվող 0,6041 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության հողամասը, հողատեսքը՝ վարելահող, ճանաչել որպես առանձին գույքային միավոր և ներկայացնել իրավունքի պետական գրանցման. չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր՝ 20259V54GP:

2. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ**

2025 թ. մայիսի 30
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 մայիսի 2025 թ. N 123-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՆԴԵՎԱԶ ԳՅՈՒՂՈՒՄ ԳՏՆՎՈՂ 0,77781 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՐՊԵՍ ԱՌԱՆՁԻՆ ՄԻԱՎՈՐ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով՝ ***որոշում եմ***՝

1. Ջերմուկ համայնքի սեփականություն հանդիսացող Գնդեվազ գյուղում գտնվող 0,77781 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության հողամասը, հողատեսքը՝ վարելահող, ճանաչել որպես առանձին գույքային միավոր և ներկայացնել իրավունքի պետական գրանցման. չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր՝ 2025BCULDX:

2. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ**

2025 թ. մայիսի 30
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2 հունիսի 2025 թ. N 124-Ա

ՄԱՆԻԱ ԱՇՈՏԻ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՄԱՏԵՂ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ՝ ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգին համապատասխան՝ հաշվի առնելով Ջերմուկ համայնքի Գնդեվազ գյուղի բնակիչ Մանիա Աշոտի Մնացականյանի դիմումը (մտից՝ N 832, 29.05.2025 թ.) ***որոշում եմ՝***

1. Ջերմուկ համայնքի Գնդեվազ գյուղի բնակիչ Մանիա Աշոտի Մնացականյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով (հիմք՝ սեփականության իրավունքի վկայական N 616711) պատկանող Գնդեվազ գյուղի 18-րդ փողոցի վրա գտնվող անշարժ գույքին՝ տնամերձ հողամասին (մակերեսը՝ 0,23 հա), տրամադրել հետևյալ հասցեն՝

Ջերմուկ համայնք, գ. Գնդեվազ, 18-րդ փողոց N 1:

2. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից:

3. Սույն որոշումն ուժի մեջ է հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ, ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

ԱՇՈՏ ԽԱՉԱՏՐՅԱՆ

2025 թ. հունիսի 2
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2 հունիսի 2025 թ. N 125-Ա

ՀԱՆԳՈՒՅՑԱԼ ԿՈԼՅԱ ՄԱՐԳԱՐՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ՝ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ, ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգին համապատասխան՝ հաշվի առնելով հանգուցյալ Կոլյա Մարգարյանի իրավահաջորդ, Ջերմուկ համայնքի բնակիչ Արարատ Կոլյայի Մարգարյանի դիմումը (մտից՝ N 833, 29.05.2025 թ.) ***որոշում եմ՝***

1. Ջերմուկ համայնքի Գնդեվազ գյուղի 5-րդ փողոցի վրա գտնվող, հանգուցյալ Կոլյա Մարգարյանին սեփականության իրավունքով պատկանող բնակելի տանը (օժանդակ շինություններով)՝ 0,0645 հա մակերեսով բնակավայրերի նշանակության տնամերձ (բնակելի կառուցապատման) հողամասով (կադաստրային ծածկագիրը՝ 10-016-025-007, վկայական N 616899, տրված 10.04.2002 թ.) տրամադրել հետևյալ հասցեն՝

Ջերմուկ համայնք, գյուղ Գնդեվազ, 5-րդ փողոց N 28:

3. Սույն որոշումը ենթակա է գրացման ՀՀ Կադաստրի կոմիտեի կողմից:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ, ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

ԱՇՈՏ ԽԱՉԱՏՐՅԱՆ

2025 թ. հունիսի 2
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

3 հունիսի 2025 թ. N 126-Ա

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ՆԱՐԻՆԵ ԱՌԱՔԵԼՅԱՆԻՆ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ԿԱՄ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՓՈԽԱՐԻՆԻՉՆԵՐԻ ԿԱՄ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՆՄԱՆԱԿՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 4-րդ կետերի, Ջերմուկի համայնքի ավագանու 2022 թվականի նոյեմբերի 18-ի N 89-Ն և 2024 թվականի դեկտեմբերի 25-ի N 76-Ն որոշումների, հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Նարինե Առաքելյանի հայտը (մտից՝ N 855, 2025 թվականի հունիսի 2)՝ ***որոշում եմ՝***

1. Անհատ ձեռնարկատեր Նարինե Առաքելյանին տալ 2025 թվականի ընթացքում Ջերմուկ քաղաքի Ազատամարտիկների փողոցի N 22/1 հասցեում գտնվող խանութումծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների (բացառությամբ բժշկական նշանակության ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների) կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառքի թույլտվություն (Թույլտվություն N 41):

2. Անհատ ձեռնարկատեր Նարինե Առաքելյանին պարտավորեցնել Ջերմուկի համայնքապետարանի 900365031351 հաշվեհամարին վճարելու տեղական տուրք՝ 9750 (ինը հազար յոթ հարյուր հիսուն) դրամ՝ յուրաքանչյուր եռամսյակի համար:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում անհատ ձեռնարկատեր Նարինե Առաքելյանին որոշման ընդունման մասին իրազեկելուն հաջորդող օրվանից և տեղական տուրքի վճարման առկայությամբ՝ ուժի մեջ է մինչև ս/թ դեկտեմբերի 31-ը:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ**

2025 թ. հունիսի 3
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

3 հունիսի 2025 թ. N 127-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 0,334 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՐՊԵՍ ԱՌԱՆՁԻՆ ՄԻԱՎՈՐ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված «Անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու վայրի հասցեավորման, ինչպես նաև անշարժ գույքի հասցեների ռեեստրի ստեղծման և վարման կարգի» հիման վրա՝ ***որոշում եմ***՝

1. Ջերմուկ համայնքի սեփականություն հանդիսացող Ջերմուկ քաղաքի Մյասնիկյան փողոցի վրա գտնվող 0,334 հա մակերեսով բնակավայրերի նշանակության հողամասը, գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման, ճանաչել որպես առանձին գույքային միավոր և ներկայացնել իրավունքի պետական գրանցման. չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր՝ 2025NA5AYX:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված հողամասին տրամադրել հետևյալ հասցեն՝

Ջերմուկ համայնք, ք. Ջերմուկ, Մյասնիկյան փողոց N 2/2:

3. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից:

4. Սույն որոշումն ուժի մեջ է հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ**

2025 թ. հունիսի 3
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

03 հունիսի 2025 թ. N 128-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 0,083647 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՐՊԵՍ ԱՌԱՆՁԻՆ ՄԻԱՎՈՐ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված «Անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու վայրի հասցեավորման, ինչպես նաև անշարժ գույքի հասցեների ռեեստրի ստեղծման և վարման կարգի» հիման վրա՝ ***որոշում եմ՝***

1. Ջերմուկ համայնքի սեփականություն հանդիսացող Ջերմուկ քաղաքի Մյասնիկյան փողոցի վրա գտնվող 0,083647 հա մակերեսով բնակավայրերի նշանակության հողամասը, գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման, ճանաչել որպես առանձին գույքային միավոր և ներկայացնել իրավունքի պետական գրանցման. չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր՝ 2025NA5AYX:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված հողամասին տրամադրել հետևյալ հասցեն՝

Ջերմուկ համայնք, ք. Ջերմուկ, Գործարանային փողոց N 2:

3. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից:

4. Սույն որոշումն ուժի մեջ է հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ**

2025 թ. հունիսի 3
Ջերմուկ